

# ՀԱՆԳԻՍՏ
# Տ. ԵՂԻՇԵ ՔԱՀԱՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
# (1902—1975)

1975 թ. հունվարի 14-ին, 72 տարեկան հասակում, Երևանում վախճանվեց տ. Եղիշե քհն. Վարդանյանը:

Հանգուցյալը ծնվել է 1902 թ. Աշտարակի



շրջանի Դաղ գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է Սամաղարի գյուղական դպրոցում:

1927 թ. քահանա է ձեռնադրվում ձեռամբ տ. Խորեն արքեպ. Մուրադբեկյանի և նշանակվում Դաղ գյուղի եկեղեցու հոգևոր հովիվ:

1945 թ. Գերագույն հոգևոր խորհրդի կողմից որոշ ժամանակով նշանակվում է ս. Գեղարդ վանքի վանահոր պաշտոնակատար:

Այնուհետև ծառայում է Հայաստանի տարբեր եկեղեցիներում:

Իր նվիրյալ ծառայության համար 1962 թ. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կողմից պարգևատրվում է քահանայական լանջախաչով:

Հանգուցյալի վերջին օծումը կատարվում է հունվարի 16-ին ս. Հովհաննես եկեղեցում՝ ձեռամբ Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանի:

Հանգուցյալը եղել է հավատավոր, իր կոչման բարձրության վրա գտնվող պարտաճանաչ հոգևորական:

Հանգուցյալի մարմինը ամփոփվում է Երևանի Շահումյանի շրջանի նոր գերեզմանատանը:

Հանգի՜ստ իր ոսկորներին: